



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ԶԱՂԱԶԱՊԵՏ

« 30 » 08 2006թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ

347

Զաղ. Մանուկ Գորգինյանին
400.0 ք.մ. մակերեսով պետական սեփա-
կանություն հանդիսացող հողամաս
օտարելու մասին.

Գյումրու քաղաքապետարանի պետական սեփականություն հանդիսացող հողերի
վարձակալության և օտարման մրցութային ու աճուրդային հանձնաժողովի 2006թ.
մարտի 20-ի կայացած նիստում կազմակերպվել է Գյումրու քաղաքապետի
10.02.06 թ. թիվ 152 որոշմամբ առանձնացված, Գ.Նժդեհի փող. հարևանությամբ
/ ՍՕ6-53 / ծածկագրով 400.0 ք.մ. մակերեսով պետական սեփականություն
հանդիսացող հողամասի օտարման աճուրդ:

Զաղ. Մանուկ Գորգինյանը մասնակցելով նշված հողամասի
/ծածկագիր ՍՕ6-53 / օտարման աճուրդին՝ վճարելով աճուրդում առաջարկված
առավելագույն գինը՝ 510000 /հինգ հարյուր տաս հազար / դրամ.
ճանաչվել է աճուրդում հաղթող /արձանագրություն 5/8 /:

Նկատի ունենալով վերոհիշյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության
«Հողային օրենսգրքի» 67, 68, 69 և 70 հոդվածների, ղեկավարվելով «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ
հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի, պետական սեփականություն հանդի-
սացող հողերը վարձակալության և օտարման մրցութային ու աճուրդային
հանձնաժողովի 2006 թ. մարտի 20-ի նիստի թիվ 5/8
արձանագրությունը:

1.1. Գ.Նժդեհի փող. հարևանությամբ պետական սեփականություն
հանդիսացող 400.0 ք.մ. մակերեսով հողամասը /ծածկագիր ՍՕ6-53 / սեփականու-
թյան իրավունքով հանձնել նշված հողամասի օտարման աճուրդում հաղթած
քաղ. Մանուկ Գորգինյանին որպես բակ ծգտագործելու
նպատակով:

2. Հանձնարարել քաղաքաշինության և շինարարության բաժնին /պետ՝ Հ.Կարապետյան
տաժնակված կախով տրամադրել սեփականության իրավունքով քաղ. Մանուկ
Գորգինյանին հանձնվող հողամասի հատակագծային ուղվանկարը և մյուս
անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերը:

3. Հողի օտարման պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող
իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղ.
 Մանուկ Գորգինյանի հաշվին:

4. Հողամասը ըստ գործառնական նշանակության չօգտագործելու դեպքում, այն ետ կվերցվի՝ օրենքով սահմանված կարգով:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Վ. ԴՈՒԿԱՍՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏԻ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ՄԱԶՄԱՆՅԱՆ

«Հաստատում եմ»
Գյումրու քաղաքապետ
Վ.Ն.Դուկասյան

(ստորագրություն)

Կ.Տ.

« _____ » _____ 2006 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/8

հողամասն աճուրդով վաճառելու մասին

« 20 » ՄԱՐՏԻ 2006 թ.

1. Հողամասի օգտագործման նպատակը, հասցեն ՈՐՊԵՍ ԲԿԿ ԾԳՏԿԳՐԱԾԷԼԸ

Գ. ԶԿԴԿԻՍ ԳՈՐԴՈՒՄ ԿԼԻԿՎԿԼԶԸԹՅԱՆ

2. Հողամասն աճուրդով վաճառելու մասին համապատասխան որոշման համարը և տարեթիվը

Գյումրու քաղաքապետի 10.02.06 թ. թիվ 152 որոշում:

3. Վաճառվող հողամասի համարը, ինդեքսը Ա 06-53 400,0 ԲԿԿ.Մ

4. Հողամասի մեկնարկային գինը (հազ.դրամ) 460,0 (ՎՐԱՄ ԿԼԻԿԸԼԻ ՎԿԹՍՈՂ)

5. Աճուրդային քայլի չափը (հազ.դրամ) _____

6. Աճուրդում առաջարկված հողամասի առավելագույն (վաճառքի) գինը (հազ.դրամ) 510 0

(7129 - ՏԿՐՅՈՒՆ ՏԿՍԻՆ ԿԼԵԿԻ / ԴՈՒԿԱՆ)

7. Գրավի չափը (հազ.դրամ) 23,0 (ԲՍԿԴԿԻՆԲ)

8. Աճուրդի մասնակիցների թիվը 2

9. Գնորդի տոմսի համարը 11

10. Գնորդի անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրային տվյալները, իրավաբանական անձի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը ՄԿԶԸԿ ԳՐԱԳԻՆՅԱՆ

ԱՇ 0337153 018, ԱՐԱՎՅԱՆ ԳՈՐԴՈՒՄ, ԳԻՆ 72

Գնորդ ՄԿԶԸԿ ԳՐԱԳԻՆՅԱՆ

Ածուրդային հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Դուկասյան

անդամներ՝ Ա. Մազմանյան

Հ. Գրիգորյան

Հր. Ասրադեղյան

Ն. Մանուկյան

Ա. Դեմիրճյան

Ֆ. Զվակերյան



Ա. Գրիգորյան

Կ. Դուկասյան

Ա. Զանոյան

Գ. Առաքելյան

Հ. Անթրոնյան

Հ. Գասպարյան

Զարուհար

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ա-77

հողամասի առուվաճառքի

ք.Գյումրի

Այս հողը հանդիս է լինում հողատիրության օբյեկտի

Հայաստանի Հանրապետությունը ի դեմս Գյումրու քաղաքապետ Վ. Ղուկասյանի /այսուհետև՝ վաճառող/ որի անունից գործում է Գյումրու քաղաքապետարանի տարածքային զարգացման, քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության և անշարժ գույքի կադաստրի բաժնի աշխատակից Արամ Կոստանյանը /անձնագիր AB 0258828 016 տրված 13.12.1996թ. ք.Գյումրի Գայի փող. 17 բն. 4 / համաձայն 23.03.2006թ. թիվ 1/1-09/859 լիազորագրի մի կողմից, և Մանուկ Գորգինյանը /անձնագիր AC 0337153 018 տրված 15.07.1998թ./

(անձի անվանման կամ անունը, ազգանունը)

ք.Գյումրի Արսլան փող. 72 տուն (այսուհետև՝ գնորդ), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

I. Պայմանագրի առարկան

1. Սույն պայմանագրով վաճառողը պարտավորվում է գնորդին որպես սեփականություն հանձնել 400.0 ք.մ. հողամաս (այսուհետև՝ գույք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ գույքը և դրա համար վճարել 510000 /հինգ հարյուր տաս հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Գույքի համար վճարված գինը որոշված է հողամասն աճուրդով վաճառելու արդյունքների մասին N 5/8 արձանագրությամբ, որը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը: Սույն պայմանագրի կնքման պահին գույքի գինը գնորդի կողմից վճարված է:

3. Գույքի հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

4. Վաճառողը երաշխավորում է, որ սույն պայմանագիրը կնքելու պահին գույքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ և արգելանքի տակ չի գտնվում:

II. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

5. Վաճառողը պարտավոր է՝

5.1. սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից երկօրյա ժամկետում գնորդին հանձնման-ընդունման ակտով հանձնել գույքը, ինչպես նաև՝ գույքի նկատմամբ գնորդի՝ գրանցված իրավունքները հավաստող փաստաթղթերը:

5.2. գնորդին հանձնել գույքի օգտագործման նպատակի, չափերի, կարգի, ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի (գյուղատնտեսական հողերի դեպքում՝ նաև որակական հատկանիշների), ինչպես նաև սահմանափակումների (ներառյալ սերվիտուտները) առկայության մասին 2006թ. մարտի 20-ին ժամը 16⁰⁰ -ին Գյումրու քաղաքապետարանում

(նշել աճուրդի անցկացման տեղը, օրը, ժամը)

կայացած աճուրդից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված տվյալների համապատասխան գույք:

6. Եթե վաճառողը գնորդին հանձնել է սույն պայմանագրի 5.2-րդ կետում նշված պահանջներին չհամապատասխանող գույք, ապա գնորդն իրավունք ունի պահանջելու փոխարինել այդ գույքը, կամ հրաժարվելու հանձնված գույքից և պահանջելու վերադարձնել գույքի համար վճարված գինը:

III. Սեփականության իրավունքի փոխանցումը

7. Սույն պայմանագիրը ենթակա է պարտադիր նոտարական վավերացման:

8. Գույքի նկատմամբ գնորդի սեփականության իրավունքը ծագում է սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

9. Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է երկու ամուսիններին էլ. Ամուսինը՝ Մանուկ Գորգինյան /անձ. AC 0337153 / ք.Գյումրի Արսլան փող. 72 տուն
Կինը՝ Նարինե Մանուչարյան /անձ. AF 0622363 / ք.Վանաձոր Նժդեհի փող. 2-14

IV. Կողմերի պատասխանատվությունը

10. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կրում են գույքային պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. Պայմանագրի գործողությունը

11. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքվելու, նոտարական կարգով վավերացվելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնում պայմանագրից ծագող իրավունքների գրանցման պահից և գործում է մինչև կողմերի՝ սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

VI. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

12. Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավել, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

VII. Եզրափակիչ դրույթներ

13. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կամ պայմանագիրը լուծվում է կողմերի գրավոր համաձայնությամբ նոտարական վավերացումով կամ դատարանի վճռով:

15. Սույն պայմանագիրը կնքված է 4 /չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավական ուժ, որից մեկ օրինակը պահվում է նոտարական գրասենյակում, մյուսները տրվում են կողմերին:

16. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

Վաճառող՝ Գյումրու ՔԱՂԱՔԱՊԵՏ

ԳՆՈՐԴ Մանուկ Գորգինյան

Վ. ՂԱԿԱՍՅԱՆ

Արմյան փող. 72 տուն

(հասցեն)

ք. Գյումրի, Շիրակացի փողոց 68

Հ/հ 900215301145 Հայեկոնոմբանկ

Մանուկ Գորգինյան

(բանկային վավերապայմանները)

Լիազորված անձ՝ ԱՐԱՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Կ.Տ. /ստորագրություն/

Կ.Տ. /ստորագրություն/

որոնք պահվում են նոտարական գրասենյակում
սույն պայմանագիրը վավերացված է իմ

Գյումրիի Նոտարական տարածք

Նոտար Նուբար Բաբայան

ազգանունը, անունը և հայրանունը սկզբնական տառերով

կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:


Պայմանագիրը ստորագրողների ֆիզիկական անձի ինքնությունը և նրա գործունեությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/ իրավունակությունը և նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են, սույն պայմանագրից բխող իրավունքները ենթակա են գրանցման ամշարժ գույքի գրանցման համապատասխան ստորաբաժանումում համաձայն քաղաքացիական օրենսգրքի 563 հոդվածի:

Գրանցված է սեղանամատյանում 26.12. -ով:

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար Նուբար Բաբայան

ստորագրությունը





ԳՅ. Զ. ԳՅՈՒՄՐԻ, ԱՐՈՒՅԱՆ 248

RA, GYUMRI, 248 ABOVYAN

ՔԵՐ. /+374312/ 2-31-67.

ԵՐԵՎԱՆ /+374312/ 2-12-89

« 06 » 03 2008թ.

ԴԳ 60

ժող. ընտանիքի Գրադարան/Դ

Հայտնվում է Ձեզ, որ ըստ Ձեր ներկայացրած փաստաթղթերի՝

1. 05.03.2008թ. N 1-891 պիտակ
2. 18.04.2006թ. N 1/1-009/1929 գրադար
3. Խաչատուրյան Կարեն Սարգսի 03.04.2006թ. N 2612 պիտակ
4. Գրադար Խաչատուրյան 10.02.06թ. N 152, 30.03.06թ. N 348 պիտակ
5. 20.03.2006թ. N 5/6 պիտակ
6. Խաչատուրյան Կարեն Սարգսի
- 7.
- 8.

հնարավոր չէ կատարել պետական գրանցում Գյումրու Գ. Զեյնեի ԴԳ 18/10^ա
հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ հետևյալ պատճառաբանությամբ.

Զեյնեի Կարեն Սարգսի Խաչատուրյան Կարեն Սարգսի ԴԳ (անհատական -
Կարեն Դևիդյան և Զեյնեի Դևիդյան)։

հետևաբար Ձեր խնդրանքը պետական գրանցման վերաբերյալ ենթակա է մերժման համաձայն
Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքի 21-24, 43 հոդվածներ

ԳՅ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գյումրի ՏՍ-ի ղեկավար

Գ. Շահինյան

Կատարող



Քաղաքացիական գործ թիվ ԾԴ/6016/02/21

Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան)

նախագահությամբ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ
պատասխանողի ներկայացուցիչ

ՎԱՀԱԳՆ ԹՈՐՈՍՅԱՆԻ
Հ. Խաչատրյանի
Գ. Մախսատյանի
Հ. Վարդանյանի

2023 թվականի հուլիսի 25-ին (ք. Գյումրի)

դոնրաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Մանուկ Աշոտի Գորգինյանի (անձնագրային տվյալներ՝ AN0581969, տրված՝ 24.07.2013թ. 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ ք. Գյումրի, Աբովյան փող., տուն 72) ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի (հասցե՝ ք. Գյումրի, Վարդանյանց հրապարակ 1) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի նախատուրը վերացնելու պահանջների մասին

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայցադիմումը Դատարան է ներկայացվել 24.09.2021 թվականին:

Դատարանի (դատավոր Ա. Սարոյան) 05.10.2021 թվականի որոշմամբ մերժել է հայցադիմումի ընդունումը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, այն է՝ գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով:

Մանուկ Աշոտի Գորգինյանի ներկայացուցիչը նշված որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք:

ՀՀ Վերաքննիչ՝ քաղաքացիական դատարանի 10.12.2021 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Որոշվել է՝ վերացնել ԾԴ/6016/02/21 քաղաքացիական գործով ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» 05.10.2021 թվականի որոշումը:

Թիվ ԾԴ/6016/02/21 քաղաքացիական գործը 27.01.2022 թվականին (Մ-1722/22) ստացվել է Դատարան և նույն օրը մակագրվել է Դատարանի դատավոր Վ. Թորոսյանին:

Դատարանի 01.02.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 08.11.2022 թվականի որոշմամբ 16.12.2022 թվականին հրավիրվել նախնական դատական նիստ:

11.05.2023 թվականին նշանակված նախնական դատական նիստի ընթացքում հայցվորի ներկայացուցիչը դիմում է ներկայացրել Դատարան, որով հայտնել է, որ թիվ ՇԴ/6016/02/21 քաղաքացիական գործով մասնակիորեն հրաժարվում են հայցից, այն է. պատասխանող՝ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ֆինանսների նախարարության դեմ ներկայացված նյութաիրավական պահանջից և խնդրել է կայացնել որոշում, այդ մասով վարույթն առանձնացնելու և կարճելու մասին:

Դատարանի 11.05.2023 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/6016/02/21 քաղաքացիական գործից ըստ հայցի Մանուկ Աշոտի Գորգինյանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ֆինանսների նախարարության՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու և սեփականության իրավունքի խախտումը վերացնելու պահանջի մասը առանձնացվել է առանձին վարույթ, և որոշում է կայացվել գործի վարույթը կարճել:

03.07.2023 թվականին հայցվորի ներկայացուցիչը դատարան է ներկայացրել կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը և խնդրել է հաստատել այն վճռով:

04.07.2023 թվականին հրավիրվել է դատական նիստ:

04.07.2023 թվականին գործի քննությունն համարավել է ավարտված և 25.07.2023 թվականին նշանակվել է դատական ակտի հրապարակման օր:

2. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Դատարանը, քննարկելով կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման, իսկ քաղաքացիական գործի վարույթը՝ կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հաշտության համաձայնությունը քննարկում է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ(...):

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե 1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին, 2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը, 3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել, 4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ կողմերի միջև կնքված և Դատարան ներկայացված հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման, քանի որ այն չի հակասում օրենքին կամ այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց



որավունքները կամ օրինական շահերը, չի պարունակում այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը. հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել, ինչպես նաև՝ այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնություն կնքելիս գործին մասնակցող անձինք անդրադառնում են դատական ծախսերի բաշխմանը, այդ թվում նաև ներկայացուցիչների ծախսերի հատուցման հարցին: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հաշտության համաձայնություն կնքած անձինք դատական ծախսերը բաշխելու հարցը չեն կարգավորել հաշտության համաձայնությամբ, ապա դատարանը հաշտության համաձայնություն կնքած անձանցից դատական ծախսերը բռնագանձում է հավասարաչափ:

Տվյալ դեպքում, կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունով հայցվորը հրաժարվել է դատական ծախսերից և խնդրել է դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Նման պայմաններում դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ, 182-րդ, 183-րդ և 193-րդ, հոդվածներով՝ դատարանը

Վ Ճ Ո Ւ Շ Ց

1. Հաստատել Մանուկ Աշոտի Գորգինյանի և ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի միջև 03.07.2023 թվականին կնքված հաշտության համաձայնությունը՝ հետևյալ բառացի շարադրանքով.

ՀՀ ԱՇՏՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

03.07.2023 թվական

ք. Գյումրի

Թիվ ՇԳ/6016/02/21 քաղաքացիական գործով կողմերս, հայցվոր՝ Մանուկ Աշոտի Գորգինյանը ի դեմս ներկայացուցիչ Գուգեն Հովհաննեսի Մախասյանի և պատասխանող՝ Գյումրի համայնքը, ի դեմս ներկայացուցիչ Հրաչիկ Վարդանյանի (այսուհետ նաև՝ հաշտության համաձայնության կողմեր) որոշում ենք վեճը ավարտել հաշտությամբ հետևյալ պայմաններով՝

1. Պատասխանող՝ Գյումրի համայնքը՝ ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով սահմանված ձևով, հայցվոր՝ Մանուկ Գորգինյանի հետ՝

2006 թվականի ապրիլի 3-ին ստորագրված՝ սույն օրը՝ Գյումրի Նոտարական տարածքի Նոտար Հայկանուշ Ֆենդյանի կողմից վավերացված, «հողամասի առուվաճառքի» N Ա-77 պայմանագրով օտարված (Առուվաճառքի ամբողջ գումարը վճարված է՝ 21.03.2006 թվականին), ք. Գյումրի, Գ. Նժդեհի փողոց թիվ 7/10Ա հասցեով, 400.0 ք.մ. հողամասն, որը հանդիսանում է՝ թիվ ԵԴ/14600/02/18 քաղաքացիական գործով վեճի առարկա, Մանուկ Գորգինյանի համաձայնությամբ, փոխարինում է՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պատական գրանցման վկայական՝ N21062023-08-0026, տրված՝ 21.06.2023 թվական), 08-001-0707-0081 կադաստրային ծածկագրով, 0.020102 ք.մ մալերեսով, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա. Մանուկյան փողոց, 6/3 հողամաս հասցեով հողամասով:

2. Կողմերն արձանագրում են, որ հողամասի փոխարինման կողմերի իրավունքները և պարտավորությունը համապատասխանաբար սահմանված են՝ ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 2-րդ կետով սահմանված օրինակելի ձևի 6-րդ կետով, ինչպես նաև, 2006 թվականի ապրիլի 3-ի Գյումրի Նոտարական տարածքի Նոտարի կողմից վավերացված, «հողամասի առուվաճառքի» N Ա-77 պայմանագրի 6-րդ կետով:

3. Հաշվի առնելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավանդությունը, համաձայն որոնց՝ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու մասին վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, ուստի, կողմերը պարտավորվում են՝ թիվ ԵԴ/6016/02/21 քաղաքացիական գործով՝ ՀՀ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու մասին>> վճռի հրապարակմանը հաջորդող տնտեսական կարգով նշել՝ Գյումրի համայնքի և Մանուկ Գորգինյանի 2006 թվականի ապրիլի 3-ին ստորագրված «հողամասի առուվաճառքի» N Ա-77 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր, հետևյալ բովանդակությամբ.

<<2006 թվականի ապրիլի 3-ի «հողամասի առուվաճառքի» N Ա-77 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1-ին Կետում՝ <<400.0>> թիվը փոխարինել՝ <<0.020102 >> թվով, իսկ <<ք.մ.>> տառերից հետո լրացնել՝ <<08-001-0707-0081 կադաստրային ծածկագրով, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա. Մանուկյան փողոց, 6/3 հողամաս հասցեով>> բառերը:

Պայմանագրի՝ 3-րդ կետում <<Գույքի>> բառից առաջ լրացնել՝ <<08-001-0707-0081 կադաստրային ծածկագրով, 0.020102 ք.մ մալերեսով, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա. Մանուկյան փողոց, 6/3 հողամաս հասցեով>> բառերը:

Պայմանագրի՝ 5.2. -ը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<գնորդին հանձնել՝ սույն պայմանագրի 1-ին կետով սահմանված գույքը>>:

Պայմանագրի 9.-րդ կետից հանել՝ <<անձ. AC 0337153>> և <<անձ. AF 0622363>> բառերը, իսկ <<ք. Վանաձոր Նժդեհի փող. 2-14>> բառերը փոխարինել՝ <<ք. Գյումրի Արովյան փող. 72 տուն>> բառերով>>:

4. Պայմանագրի փոփոխության նոտարական վավերացման և ինկորպորացված պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցման ծախսերի կրման պարտականությունը կրում է՝ Մանուկ Գորգինյանը:

5. Պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցման ներկայացնելու պարտավորությունը կրում է՝ Մանուկ Գորգինյանը, Պայմանագրի նոտարական վավերացումից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում:


6. Եստական ծախսերի հարցը համարել լուծված:

Մանուկ Գորգինյանի
Լիազորված ներկայացուցիչ՝
Գորգեն Մալխասյան
(ստորագրություն)

Գյուրի համայնքի
Լիազորված ներկայացուցիչ
Հրաչիկ Վարդանյան
(ստորագրություն)>>:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:
3. Քաղաքացիական գործի վարույթը, կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով, կարճել:
4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
5. Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:
6. Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ



Վ. ԹՈՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 21 հունիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա. Մանուկյան փողոց 6/3 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության 16/06/2006թ. թիվ 1089-Ն որոշում, Համայնքի ղեկավարի 04/04/2023թ. թիվ 873-Ա, 07/04/2023թ. թիվ 889-Ա որոշումներ

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0707-0081

Մակերեսի չափը (հա)՝ 0.020102

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 21062023-08-0026, գաղտնաբառ՝ THGEP4ECQAC3

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳԱՅԱՆԵ
ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ջբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 21062023-08-0026, գաղտնաբառ՝ THGEP4ECQAC3

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

